ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

"12" փետրվարի 2013թ № 13- Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՈՒՄ 2013 ԹՎԱԿԱՆԻՆ ՀՆԱՐԱՎՈՐ ԳԱՐՆԱՆԱՅԻՆ ՀԵՂԵՂՈՒՄՆԵՐԻՑ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆՆ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ, ԴՐԱՆՑ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ ԿԱՆԽԵԼՈՒ, ՆՎԱԶԵՑՆԵԼՈՒ, ՎԵՐԱՑՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՄԱՐԶԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԸ ԵՎ ԿԱՆԽԱՐԳԵԼԻՉ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՊԼԱՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի 1-ին կետով, «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության» մասին Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի պահանջներով, Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997թ. մայիսի 6-ի «Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին» ՆՀ-728 հրամանագրի 1.21-րդ կետի ա) ենթակետի և 1.22-րդ կետի դրույթներով և համաձայն Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության Հայաստանի Հանրապետության փրկարար ծառայության Սյունիքի մարզային փրկարարական վարչության պետի 2013թ. փետրվարի 4-ի՝ հնարավոր գարնանային հեղեղումներից բնակչության պաշտպանությունն ապահովող միջոցառումների իրականացման վերաբերյալ N20/66 գրության, **ո ր ո շ ու մ եմ՝**

1. Հաստատել՝

1) ՀՀ Սյունիքի մարզում 2013թ հնարավոր գարնանային հեղեղումներից բնակչության պաշտպանությունն ապահովելու, դրանց հետևանքները կանխելու, նվազեցնելու, վերացնելու նպատակով մարզային հանձնաժողովի անհատական կազմը՝ համաձայն N1 հավելվածի.

2) Կանխարգելման, նվազեցման և վերացման միջոցառումների պլանը՝ համաձայն N2 հավելվածի:

2. Հեղեղումների կանխարգելիչ միջոցառումների ցանկում ընդգրկված մարզի համայնքների ղեկավարներին առաջարկել՝ ապահովելու պլանով նախատեսված աշխատանքների իրականացումը:

3. Մարզպետարանի աշխատակազմի ղեկավարին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ Ս.ԽԱՉԱՏՐՅԱՆ

2013թ. փետրվար 12
ք. Կապան

Հավելված 1
ՀՀ Սյունիքի մարզպետի
2013թ. փետրվարի 12 -ի N13-Ա որոշման

ԿԱԶՄ

ՀՀ Սյունիքի մարզում 2013թ. հնարավոր գարնանային հեղեղումներից և սելավներից բնակչության պաշտպանությունն ապահովելու նպատակով ստեղծված հանձնաժողովի

Ա.Դոլունց	–	Մարզպետի տեղակալ, հանձնաժողովի նախագահ
Ա.Հարությունյան	–	ՀՀ ԱԻՆ ՓԾ Սյունիքի մարզային փրկարարական վարչության պետ
Ս.Ավետիսյան	–	Մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄՏՍ գործունեության համակարգման վարչության պետ
Ա.ՈՒստաբաշյան	–	Մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության պետ
Ս.Թանգյան	–	Մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ
Ա.Ծատրյան	–	Մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ
Մ.Կոստանդյան	–	Մարզպետարանի աշխատակազմի հողաշինության և հողօգտագործման բաժին-մարզային հողային պետական տեսչության պետ
Ժ. Գևորգյան	-	Սյունիքի մարզային հիդրոմետ ծառայության պետ

ՀՀ Սյունիքի մարզպետարանի
աշխատակազմի ղեկավար Ռ.Ղազարյան

Հավելված2
ՀՀ Սյունիքի մարզպետի
2013թ. փետրվարի 12-ի N13-Ա որոշման

ՊԼԱՆ

ՀՀ Սյունիքի մարզում 2013թ. հնարավոր գարնանային հեղեղումներից բնակչության պաշտպանությունն ապահովելու, դրանց հետևանքները կանխելու, նվազեցնելու և վերացնելու նպատակով կանխարգելիչ միջոցառումների

Սյունիքի մարզի տարածքը ներկայացնում է ուժեղ մասնատված բարձր լեռների, սարավանդների ու խորը գետահովիտների մի բարդ համադրություն, որի երկրաբանական, հողակազմական և կլիմայական պայմանները նպաստում են վտանգավոր երկրաբանական, հիդրոերկրաբանական երևույթների (սողանքներ, սելավներ, քարաթափվածքներ և այլն) զարգացմանը:

Մարզի տարածքում անցնում են Ողջի, Որոտան և Մեղրի գետերը, որոնց աղբյուրներն են հանդիսանում հալոցքային, անձրևային և ստորգետնյա ջրերը:

Գետավազաններում կուտակված հողմահարված ապարների, կենցաղային աղբի. թափոնների առկայության պայմաններում գարնանային վարարումներից առաջանում են սելավներ, որոնց ժամանակ վնասվում են բնակավայրերի կոմունիկացիաները՝ ջրմուղ կոյուղու խողովակաշարերը, էլեկտրահաղորդման հենասյուները, հոսանքի և հեռախոսի լարերը, ավտոճանապարհները, կամուրջները և գյուղատնտեսական հողատարածքները:

Գարնանային վարարումների ժամանակ ջրածածկման գոտում են հայտնվում՝

- Որոտան գետի - Շաղատի, Բալաքի, Շաքիի, ՈՒյծի, Շամբի, Որոտանի(Սիսիանի) առափնյա տնտեսություններն ու գյուղատնտեսական հողատարածքները.
- Սիսիան գետի – Արևիսի, Թասիկի, Հացավանի, Աշոտավանի, առափնյա տնտեսություններն ու գյուղատնտեսական հողատարածքները.
- Վարարակ գետի – Գորիսի և Քարահունջ գյուղի գետափնյա շինությունները, գյուղատնտեսական հողատարածքները.
- Աճանան գետի – Նորաշենիկ, Ձորաստան, Սյունիք գյուղերի գյուղատնտեսական հողատարածքները.
- Ողջի գետի – Լեռնաձոր համայնքի գյուղատնտեսական հողատարածքները, Կապան քաղաքը.
- Մեղրի գետի – Մեղրի քաղաքը:

Սյունիքի մարզում 2013թ հնարավոր գարնանային հեղեղումներից բնակչության պաշտպանությունն ապահովելու, դրանց հետևանքները կանխելու, նվազեցնելու, վերացնելու և առավել վթարային վիճակում գտնվող աղետավտանգ տեղամասերն հայտնաբերելու, ուսումնասիրելու և առաջնահերթ միջոցառումներ իրականացնելու նպատակով անհրաժեշտ է իրականացնել հետևյալ միջոցառումները.

1.ՀՀ Սյունիքի մարզի տարածքում 2013 թվականի հնարավոր գարնանային հեղեղումների և սելավների կանխարգելման միջոցառումներ

Հ/հ	Միջոցառումների անվանումը	Կատարողը	Կատարման ժամկետը	Պատասխանատու	Ուժերը և միջոցները
	1.Հակահեղեղային առաջնահերթ միջոցառումներ				
1.	Գետերի ջրի մակարդակի, օդի բարձր ջերմաստիճանի դեպքում: Օրվա ընթացքում 2 անգամ 7^{00}-19^{00} տվյալների հայտնում Սյունիքի ՄՓՎ օպերատիվ հերթապահին:	Մարզի հիդրոլոգիական և օդերևութաբանական կայանների պետեր	Հեղեղումների ժամանակաշրջանը ամեն օր	Մարզի հիդրոօդերևութաբանական ծառայություն	Ծառայության ուժեր և միջոցներ
2.	Հեղեղավտանգ վայրերում հսկողության իրականացում և հեղեղների սպառնալիքի կամ առաջացման դեպքում Սյունիքի ՄՓՎ հաղորդում:	Համայնքապետարաններ, օբյեկտներ	Հեղեղումների ժամանակաշրջանում	Համայնքների, օբյեկտների ղեկավարներ	Համայնքների, օբյեկտների ղեկավարներ և հերթապահներ
3.	Հեղեղավտանգ գոտիներում գտնվող օբյեկտներում (ձեռնարկություններ, բենզալցակայան և սննդի կետեր, շուկաներ) և հողատարածքներում	Քաղաքապետարաններ, գյուղապետարաններ, պետավտոտեսչության և ոստիկանության	Մինչև հեղեղումների ավարտը	Մարզպետարանի տարածքային կառավարման վարչության պետ, մարզի ՔՊ հասարակական կարգի	Տարածաշրջանի ոստիկանության համապատասխան ուժեր և միջոցներ
	աշխատողների, երթուղիներով երթևեկողների զգուշացում, հարկ եղած դեպքում վտանգավոր գոտուց դուրս բերում:	մարմիններ		պահպանման ծառայության պետ	
4.	Հեղեղավտանգ գոտում գտնվող համայնքների, օբյեկտների և մարզպետարանի միջև անխափան կապի ապահովում	Մարզային ՀՀՀԿ	Մինչև հեղեղումների ավարտը	Մարզի կապի ծառայության պետ	Կապի մարզային ծառայության ուժեր և միջոցներ

5.	Սպանդարյանի, Տոլորսի, Անգեղակոթի, Շամբի և Գեղիի ջրամբարների ինժեներատեխնիկական հսկողության ուժեղացում և անվտանգության ապահովում	Ջրամբարների ղեկավարներ, գյուղապետարաններ	Մինչև հեղեղումների ավարտը	Ինժեներական ծառայության պետ	Ոստիկանության պահակակետեր
6.	Հեղեղումներից տուժած բնակչության բուժ. օգնության ցուցաբերում	Բուժ. հիմնարկներ	Մինչև հեղեղումների ավարտը	Բժշկական ծառայության պետ	Ոստիկանության պահակակետեր
7.	Համայնքների ղեկավարներին աջակցության ցուցաբերում հակահեղեղային միջոցառումների նախապատրաստման ուղղությամբ	Մարզային փրկարարական վարչություն, մարզային ՔՊ ծառայություններ	Դեպքերի ժամանակ	Տարվա ընթացքում	Համայնքների ՔՊ կազմավորումներ, ՄՓՎ ստորաբաժանումներ
8.	Հակահեղեղային միջոցառումների կազմակերպում, ռադիո և հեռուստահաղորդումների կազմակերպում	Մարզային փրկարարական վարչություն, մարզի լրատվական ծառայություն	Մինչև հեղեղումների ավարտը	Մարզային փրկարարական վարչության պետ	Լրատվական ծառայություններ
	2.Կանխարգելիչ ինժեներական միջոցառումներ				
1.	Սելավների, ոռոգման մայրուղիների մաքրում և գլխամասային կառույցների ամրացում	Քաղաքապետարաններ, գյուղապետարաններ, բնակչություն	Ամեն տարվա մինչև 01.05	Համայնքի ղեկավարներ	Համայնքների ՔՊ կազմավորումներ
2.	Ողջի, Որոտան, Մեղրի գետերի հեղեղավտանգ հատվածներում հունների մաքրում	Համայնքների ղեկավարներ	Ամեն տարվա մինչև 01.05	Համայնքի ղեկավարներ	Համայնքների ՔՊ կազմավորումներ
3.	Քաղաքների և գյուղերի սելավատարների մաքրում	Քաղաքապետարաններ, գյուղապետարաններ, բնակչություն	Ամեն տարվա մինչև 01.05	Համայնքի ղեկավարներ	Համայնքների ՔՊ կազմավորումներ

2.Գարնանային հեղեղումների և սելավների վտանգի նվազեցման կանխարգելիչ միջոցառումներ

Հ/Հ	Գետեր, սելավատարեր	Հավանական ջրածածկման տարածքները	Կանխարգալիչ միջոցառումներիի անվանումը	Հեղեղումների ժամանակ իրականացվող միջոցառումներ	Միջոցառումներին ներգարավվող ՔՊ ուժերը և միջոցներ
1.	Որոտան	Շաղատի, Բալաքի, Շաքիի, Ույծի, Շամբի, Որոտանի (Սիսիանի և Գորիսի տարածաշրջաններ) առափնյա տնտեսություններ ու նրանց վարելահողեր	Վերացնել դիմհարները, մաքրել գետի հունը շինարարական ու կենցաղային աղբից, ամրացնել ջրառների մատույցները	Սելավատարի ափերին նոր թմբապատերի կառուցում և հների ամրացում	Համայնքների ՔՊ կազմավորումներ, համայնքի ինժեներական տեխնիկա
2.	Սիսիան	Արևիսի, Հացավանի, Աշոտավանի, Թասիկի, Բռնակոթի առափնյա տնտեսություններ ու նրանց վարելահողեր	Վերացնել դիմհարները, մաքրել գետի հունը շինարարական ու կենցաղային աղբից, ամրացնել ջրառների մատույցները	Սելավատարի ափերին նոր թմբապատերի կառուցում և հների ամրացում	Համայնքների ՔՊ կազմավորումներ, համայնքի ինժեներական տեխնիկա
3.	Վարարակ	Վերիշեն, Ակներ, Քարահունջ գյուղերի և Գորիսի առափնյա տնտեսություններ ու նրանց վարելահողեր	Վերացնել դիմհարները, մաքրել գետի հունը շինարարական ու կենցաղային աղբից, ամրացնել ջրառների մատույցները	Սելավատարի ափերին նոր թմբապատերի կառուցում և հների ամրացում	Համայնքների ՔՊ կազմավորումներ, համայնքի ինժեներական տեխնիկա
4.	Աճանան	Նորաշենիկ, Ձորաստան, Առաջաձոր, Օխտար, Վանեք, Աճանան և Սյունիք գյուղերի առափնյա տնտեսություններ ու նրանց վարելահողեր	Սելավատարերի մաքրում, թմբապատերի վերանորոգում	Թմբապատերի բարձրացումը և ամրացումը	Համայնքների ՔՊ կազմավորումներ, համայնքի ինժեներական տեխնիկա
5.	Ողջի	Լեռնաձոր և Սյունիք գյուղերի առափնյա տնտեսություններ ու նրանց վարելահողեր	Վերացնել դիմհարները, մաքրել գետի հունը, շինարարական ու կենցաղային աղբից, ամրացնել ջրառների մատույցները	Սելավատարի ափերին նոր թմբապատերի կառուցումը և հների ամրացումը	Համայնքների ՔՊ կազմավորումներ, համայնքի ինժեներական տեխնիկա

6.	Մեղրի	Վարդանիձոր, Լեհվազ գյուղերի և Մեղրի քաղաքի առափնյա տնտեսություններ ու նրանց վարելահողեր	Վերացնել դիմհարները, մաքրել գետի հունը, շինարարական ու կենցաղային աղբից, ամրացնել ջրառների մատույցները	Սելավատարի ափերին նոր թմբապատերի կառուցումը և հների ամրացումը	Համայնքների ՔՊ կազմավորումներ, համայնքի ինժեներական տեխնիկա
7.	«Շոր ձոր»	Գորիս քաղաքին	Սելավատարի մաքրում, թմբապատերի մաքրում	Թմբապատերի բարձրացում և ամրացում	Համայնքների ՔՊ կազմավորումներ, համայնքի ինժեներական տեխնիկա
8.	Գեղի	Գեղի, Գեղավանք և Կավճուտ առափնյա տնտեսություններ ու նրանց վարելահողեր	Վերացնել դիմհարները, մաքրել գետի հունը, շինարարական ու կենցաղային աղբից, ամրացնել ջրառների մատույցները	Սելավատարի ափերին նոր թմբապատերի կառուցումը և հների ամրացումը	Համայնքների ՔՊ կազմավորումներ, համայնքի ինժեներական տեխնիկա
9.	Ծավ	Ծավի և Ներքին Հանդի առափնյա տնտեսություններ ու նրանց վարելահողեր	Վերացնել դիմհարները, մաքրել գետի հունը, շինարարական ու կենցաղային աղբից, ամրացնել ջրառների մատույցները	Սելավատարի ափերին նոր թմբապատերի կառուցումը և հների ամրացումը	Համայնքների ՔՊ կազմավորումներ, համայնքի ինժեներական տեխնիկա

ՀՀ Սյունիքի մարզպետարանի
աշխատակազմի ղեկավար Ռ. Ղազարյան